H.M. GEVORGIAN

THE HEROIC BATTLE OF ZANGEZUR

The article presents historically important heroic episode of liberation struggle of Zangezur against the Azerbaijani despotism.In November 1919 the Azerbaijani troops led by General Shikhlinski in order to capture the Zangezur in alliance with Kurdish gangs attacked it. Military forces of Zangezur under the command of Colonel Arsen Shahmazyan defeated enemy forces and thus prevented carrying out British policy, namely, to pass the region under the domination of Azerbaijan. Thus they save the Armenian population from imminent slaughter.

Keywords: Armenia, Zangezur, Daralagyaz, National Assembly, Government, Azerbaijan, heroic battle, battle, army, military unit, military forces, gang.

ՀՏԴ 341.24

Ա.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԸՆԴԴԵՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

Ներկայացվել են Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, դիտարկվել են դրանցում քեմալականների դերակատարումը, այդ պայմանագրերի բացասական դերը հայ ժողովրդի կյանքում:

Առանցքային բառեր. Ալեքսանդրապոլի պայմանագիր, Մոսկվայի պայանագիր, Կարսի պայմանագիր, միջազգային իրավունք:

Թուրքական պատվիրակության ղեկավար Քյազիմ Կարաբեքիրի և Ա. Խատիսյանի միջև Ալեքսանդրապոլում բանակցություններն սկսվեցին 1920թ. նոյեմբերի 29-ին: Հենց սկզբից Կարաբեքիրը պահանջ դրեց, որ Ռուսաստանը մասնակցություն չպետք է ունենա բանակցություններին: 1920թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում՝ Ա. Խատիսյանի և Ք. Կարաբեքիրի կողմից ստորագրվեց պայմանագիր, որն ապօրինի էր: Այդ պայմանագրի համաձայն՝ Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը անցնում էին Թուրքիային, իսկ Նախիջևանն ու Զանգեզուրը դրվում էին Ադրբեջանի հսկողության տակ: Հայաստանին իրավունք էր տրվում ունենալ 1500 զինվոր, 20 գնդացիր, 8 թնդանոթ: Չէր սահմանափակվում ժանդարմությունը, զինապարտությունը պարտադիր չէր լինելու: Հայաստանին իրավունք չէր տրվում կառուցել ամրություններ, բերդեր և այնտեղ ծանր թնդանոթներ տեղակայել: Ռուսաստանում նստող Թուրքիայի ներկայացուցիչն իրավունք էր ստանում հետաքննություն կատարել, թե ինչպես են կենսագործվում

Ալեքսանդրապոլի պայմանագրի դրույթները: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր զինված օգնություն տրամադրել Հայաստանին՝ ներքին և արտաքին վտանգի դեպքում, եթե ՀՀ կառավարությունը նման խնդրանքով դիմի իրեն: Կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներ վերադարձնել գաղթականներին, բացի նրանցից, ովքեր մասնակցել են ջարդերին, արտաքսվել, հանցանքներ են գործել և այլն:

Ալեքսանդրապոլի պայմանագրում նշվում էր, որ հենվելով մարդկային սկզբունքների վրա՝ Թուրքիայի կառավարությունը հրաժարվում էր պատերազմի հետ կապված ծախսերի փոխհատուցումից, ինչպես նաև կողմերը պայմանավորվում էին հրաժարվել պատերազմի ժամանակ կրած վնասների փոխհատուցման պահանջներից: ՀՀ կառավարությունը պարտավորվում էր Սևրի պայմանագիրը հայտարարել անվավեր, ինչպես նաև պարտավորվում էր ապահովել մահմեդականների իրավունքները ՀՀ-ում: Թուրքիան պարտավորվում էր Հայաստանին ազատ տրանզիտ տրամադրել դեպի Իրան: Հայաստանը պարտավորվում էր անվավեր ճանաչել այն բոլոր պայմանագրերը, որոնք կառնչվեն Թուրքիայի հետ և կվնասեն վերջինիս ազգային և պետական շահերը: Պայմանագրի կնքման պահից վերականգնվելու էին երկու երկրների միջև առևտրական հարաբերությունները, ինչպես նաև կողմերը հնարավորություն էին ստանում իրենց դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներին ուղարկել երկու երկրների մայրաքաղաքներն ու այլ քաղաքներ:

Պայմանագրերի օրինականության համար կարևոր է պատվիրակությունների լիազորությունների օրինականությունը: Ցանկացած միջազգային պայմանագրի օրինականության համար միջազգային իրավունքն ունի հստակ պահանջներ. Օրինակ, որևէ պայմանագիր կարող է համարվել օրինական, եթե այն ստորագրվել է ճանաչված պետության օրինական իշխանության լիազոր ներկայացուցիչ(ներ)ի կողմից, [1]: Միջազգային իրավունքով փորձաքննությունը ցույց է տալիս, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը անօրինական (illegal) է և անվավեր (invalid), քանի որ.

- պայմանագրի ստորագրման պահին պատվիրակություններից և ոչ մեկը լիազորված չէր հանդես գալու իր երկրի անունից. հայկական պատվիրակությունն արդեն չէր ներկայացնում երկրի իշխանությունը, [2] իսկ թուրքական (քեմալական) պատվիրակությունը դեռևս չէր ներկայացնում երկրի իշխանությունը (տե՛ս «Կնքող կողմերի լիազորու-թյունները»):
- պայմանագիրն ստորագրվել է միջազգային իրավունքի սկզբունքները ոտնահարող ուժի կիրառման բացահայտ սպառնալիքով:

• պայմանագիրն այդպես էլ չի վավերացվել և ուժի մեջ չի մտել:

Իշխանափոխությունը Հայաստանում տեղի է ունեցել ՀՀ իշխանությունների և ՌՍՖՍՀ ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև համապատասխան համաձայնագրի ստորագրումով, որն ստորագրվել է 1920 թ. դեկտեմբերի 2-ին, կեսօրից առաջ և ուժի մեջ է մտել նույն օրը երեկոյան ժամը 6-ին: Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման պահին (3 դեկտեմբերի, 1920) հայկական պատվիրակությունը լիազորություններ չուներ, այսինքն՝ լիազորված չէր հանդես գալու Հայաստանի Հանրապետության անունից: Մինչ, այսպես կոչված, թուրքական պատվիրակությանն անդրադառնալն անհրաժեշտ է ընդգծել, որ «թուրքական» բառն այստեղ գործածվել է զուտ էթնիկ և ոչ՝ քաղաքական իմաստով, քանի որ մինչև իսկ այդ պատվիրակության անդամներն իրենք իրավացիորեն իրենց չէին համարում Թուրքիայի պետության ներկայացուցիչներ: Պայմանագրի նախաբանում այս պատվիրակությունն անվանված է ոչ թե Օսմանյան կայսրության կամ Թուրքիայի կամ դրանց կառավարության պատվիրակություն, այլ Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարություն: Դա մի կազմակերպություն էր, որ ստեղծվել էր Թուրքիայի ռազմական հետախուզության (ղեկավարը 1912-1914 թվականներին Քյազիմ Կարաբեքիրն էր) Կարակոլ կազմակերպության հրահրումով և աջակցությամբ ստեղծված Ազգային պաշտպանության զանազան խմբերի միավորումով՝1920 թվական ապրիլի 23-ին, Անկարայում: Կարակոլի և նշյալ խմբերի գործունեությունն օրինական չէր [3]:

Զինադադարի կնքումից հետո որևէ գործողություն, որն ուղղված է զինադադարի խաթարելուն, անօրինական է և դատապարտելի:

Քեմալականների գործունեությունը նաև Թուրքիայի սահմանադրության խախտում էր, ուստի Թուրքիայի օրինական իշխանությունները դեռևս 1920 թվականի ապրիլ-մայիսին քեմալականների նկատմամբ մի շարք մահավճիռներ էին կայացրել (օրինակ, դեռևս 1920 թվականի ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի ֆեթվայով (կոնդակով) խռովարարները հայտարարվել էին օրենքից դուրս, իսկ նրանց սպանելը՝ աստվածահաճո գործ): Խռովարարների պարագլուխը՝ Մուստաֆա Քեմալը, դեռևս 1919 թվականի հուլիսի 11-ին զրկվել էր իր բոլոր կոչումներից և պաշտոններից, իսկ 1920 թվականի մայիսի 11-ին թուրքական ռազմական դատարանը նրա նկատմամբ մահապատժի վճիռ էր կայացրել: Այդ դատավճիռը 1920 թվականի մայիսի 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից: Ուստի 1920 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին Ալեքսանդրապոլ բանակցությունների եկած պատվիրակությունը ոչ թե Թուրքիա պետությունն էր ներկայացնում, այլ փախուստի մեջ գտնվող, այդ թվում՝ նաև պատերազմական հանցագործությունների համար մահվան դատա-

պարտված, քրեական հանցագործների մի կազմակերպություն՝ «Թուրքիայի Ազգային մեծ ժողով» հորջորջվող ՀԿ: Այդ կազմակերպությունը, չնայած լայնորեն տարածում գտած թյուր կարծիքի, 1920-1923 թվականներին Թուրքիայի խորհրդարանը չէր: Նա միջազգային իրավունքի և երկրի գործող սահմանադրության տեսանկյունից չէր կարող լինել խորհրդարան: Կապիտուլյացիայի ենթարկված երկրում, ռազմակալման ողջ ժամանակահատվածում, դադարում են գործել տվյալ երկրի օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները: Գերակա իշխանությունն անցնում է հաղթող երկրներին, և այդ իրավական կարգավիճակը մնում է մինչև խաղաղության պայմանագրի կնքումը և ուժի մեջ մտնելը: Այդ կարգավիճակն ու իրավիճակը միանշանակորեն ամրագրված են միջազգային իրավունքի մեջ և ամրապնդված բազում օրինակներով: Թուրքիայի պարագայում 1918 թվականի հոկտեմբերի 30-ից (Մուդրոսի զինադադարի ստորագրումից) գոնե մինչև 1923թվականի հուլիսի 24-ը (Լոզանի պայմանագրի ստորագրումը) Թուրքիայում, միջազգային իրավունքի համաձայն, իշխանությունը պատկանում էր հաղթած Դաշնակից երկրների Գերագույն խորհրդին:

«Թուրքիայի Ազգային մեծ ժողով» կազմակերպության առաջին նիստը գումարվել է 1920 թ. ապրիլի 23-ին: Այդ ժողովն ունեցել է 327 մասնակից, որոնցից առավելագույնը միայն 92 էին (1/3-ից էլ պակաս) նախկին օսմանյան խորհրդարանի նախկին անդամներ: Նրանք համարվում են նախկին, քանի որ խարհրդարանի վերջին օրինական ընտրությունները տեղի էին ունեցել 1912 թ., և այդ տարի ընտրվածների լիազորությունների ժամկետը, համաձայն գործող սահմանադրության 70-րդ հոդվածի, ավարտվել էր 1916 թ.-ին: Պատմագիտական գրականության մեջ հիշատակվող 1919 թ. վերջին ամիսների «ընտրությունները» և դրա հետևանքով 1920 թ. հունվար-ապրիլին կայացած ժողովները չեն կարող համարվել ընտրություններ և դիտարկվել որպես խորհրդարանական նիստեր, քանզի դրանք տեղի են ունեցել թուրքական ինքնիշխանության բացակայության պայմաններում և չեն իրականացվել երկրի սահմանադրության և Օրենսդրության համապատասխան: Մասնավորապես, խախտվել են սահմանադրության № 7, 17, 41, 42, 43, 45, 46, 60, 72, 77, 120 հոդվածները, քվեարկելու իրավունքից ապօրինաբար զրկված են եղել բոլոր ոչ թուրքերը: Հետևաբար, այդ ժամանակ Թուրքիայի միակ ճանաչված իշխանավորը՝ սուլթանը, համաձայն սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքի (հ-ծ 7), 1920 թվականի ապրիլի 12-ին դադարեցրել էր այդ ոչ օրինական ժողովահավաքների գործունեությունը: 1920 թվականի ապրիլի 23-ին 92 մասնակիցների լիազորությունների օրինական համարվելու դեպքում, նույնիսկ այդ թիվը խորհրդարան գումարելու համար քվորում չէր կարող ապահովել [4]: Մնացած 232-ը ներկա-

յացնում էին երկրում ապօրինի գործող, «Իրավունքների պաշտպանության շարժման» տարբեր մասնաճյուղերը:

Այսպիսով, կազմակերպության անվանումը չէ, որ որոշում է տվյալ կառույցի լիազորությունները, այլ այն իրավական և օրենսդրական հիմքը, որի վրա ձևավորվել և որի շրջանակներում կայացել է նշյալ կառույցը: Ինքնին կազմակերպության անվանումը չի սահմանում տվյալ կազմակերպության իրավասությունների շրջանակը, առավել ևս դառնում հիմք՝ միջպետական իրավական փաստաթուղթ ստորագրելու լիազորություն տալու համար: Ուստի քեմալական պատվիրակությունը Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման պահին լիազորված չէր և չէր ներկայացնում Թուրքիայի օրինական իշխանությունը:

Ինչպես գիտենք ՀՀ նախարարների խորհուրդը, այդ նույն ժամանակ, նկատի ունենալով երկրում ստեղծված կացությունը, որոշել էր հրաժարվել իշխանությունից և զինվորական հրամանատարությանը ժամանակավորապես հանձնել իշխանությունը մինչև Ռազմական Հեղկոմի ժամանումը Երևան: Ժամանակավոր իշխանությունն անցավ ռազմական ղեկավարությանը՝ Դրոյի գլխավորությամբ:

Հենց այդ օրերին ՀՀ- ում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Ինչ վերաբերում է Մոսկվայի պայմանագրին, ապա 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, որը կոչվում էր «Բարեկամության և եղբայրության մասին» ռուս-թուրքական պայմանագիր: Ռուսաստանի կողմից այն ստորագրել էին Չիչերինը և Ջ. Կորկմասովը, իսկ Թուրքիայի կողմից՝ Յուսուֆ Քեմալը և Ռիզա Նուր Ալի Ֆուադը: Մոսկվա էին հրավիրել նաև Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին, սակայն թուրքական պատվիրակությունը հրաժարվեց միացյալ կոնֆերանսի գաղափարից՝ պատճառաբանելով, թե իր կառավարությունից չունի համապատասխան լիազորություններ: Պայմանագրի առաջին կետում նշվում էր, որ Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում է չճանաչել Թուրքիային վերաբերող միջազգային որևէ ակտ, որը չի ճանաչվել Թուրքիայի ներկայիս Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչ հանդիսացող ազգային կառավարության կողմից: Նույն հոդվածում նշվում էր նաև, որ Թուրքիա ասելով՝ ներկա պայմանագրով հասկացվում է այն տարածքը, որը նշված է 1920թ. հունվարի 28-ի «Ազգային Ուխտի» մեջ [5]:

Երկրորդ հոդվածով Թուրքիային էին անցնում Կարսը, Արդահանը, ինչպես նաև Սուրմալուն, որը երբևէ Թուրքիայի կազմում չէր եղել և վերջինիս էլ անցել էր միայն պատմական գործողությունների արդյունքում: Փաստորեն Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը պաշտոնապես հայտարարում էր, որ չի ճանաչում Սևրի պայմանագիրը, իր համաձայնությունն էր տալիս Ազգային

Ուխտին, ինչը նշանակում էր, որ Ռուսաստանն ընդունում էր նաև այն թեզը, որ Թուրքիան ոչ մի թիզ հող չի վերադարձնելու Հայաստանին:

Պայմանագրի երրորդ հոդվածով կողմերը պայմանավորվում էին, որ Նախիջևանի շրջանը կազմի մի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի հովանու ներքո: Ինչ վերաբերում է Բաթումին, ապա Մոսկվայի պայմանագրով Մոսկվան այն զիջում էր Վրաստանին՝ հավատացնելով, որ նեղուցները պետք է բաց լինեն ազատ երթևեկության համար:

Միջազգային իրավունքով փորձաքննությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագիրը ևս անօրինական (illegal) է և անվավեր (invalid), քանի որ.

- պայմանագրի ստորագրման պահին պատվիրակություններից և ոչ մեկը լիազորված չէր հանդես գալու իր երկրի անունից. ռուսական (բոլշևիկյան) և թուրքական (քեմալական) պատվիրակությունները դեռևս չէին ներկայացնում իրենց երկրների իշխանությունները (տե՛ս ստորև):
- պայմանագիրն ստորագրվել է միջազգային իրավունքի դարեր ի վեր գործող պարտադիր և անբեկանելի մի քանի հիմնադրույթների (jus cogens) խախտումով:

Մոսկվայի քեմալա-բոլշևիկյան պայմանագիրը անօրինական է և անվավեր դրան կողմ հանդիսացող ՌՍՖՍՀ-ի և Թուրքիայի ազգային մեծ ժողովի կարգավիճակների պատճառով: Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի խախտում է, քանի որ «պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար՝ առանց վերջինիս համաձայնության»: Այս հիմնադրույթն ամրագրված է Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածում: Հետևաբար, Մոսկվայի պայմանագիրը չէր կարող որևէ պարտավորություն պարունակել Հայաստանի Հանրապետության համար, առավել ևս՝ որոշել հայ-թուրքական սահմանը (պայմանագրում՝ հոդված 1) կամ Նախիջևանը որպես պրոտեկտորատ հանձնել Ադրբեջանին (պայմանագրում՝ հոդված 3), քանի որ Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի դարեր ի վեր գործող պարտադիր և անբեկանելի մի քանի հիմնադրույթների (jus cogens) խախտումով:

Այսպիսով, Մոսկվայի ռուս–թուրքական պայմանագրով, առանց Հայաստանի կարծիքը հաշվի առնելու, հանուն Թուրքիայի հետ բարեկամության և եղբայրության՝ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային հանձնեց Կարսը, Արդահանը, Սուրմալուն, իսկ Ադրբեջանին՝ Նախիջևանը: Նշենք, որ դեռևս 1920թ. դեկտեմբերին Ադրբեջանը համաձայնվել էր կամովին և եղբայրաբար հրաժար-

վել Նախիջևանից՝ հօգուտ Հայաստանի, սակայն դա բավական չէր, քանի որ պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը հանձնառու էր դառնում Թուրքիայի առջև՝ թույլ չտալու, որպեսզի Խորհրդային Ադրբեջանը իրեն փոխանցած որևէ տարածք զիջի այլ պետության:

1921թ. հոկտեմբերի 13-ին Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց Կարսի պայմանագիրը: Պայմանագիրը ստորագրել են մի կողմից՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները՝ ՌՍՖՍՀ–ի մասնակցությամբ, իսկ մյուս կողմից՝ Թուրքիան: Հայաստանի կողմից պայմանագիրը ստորագրել են արտաքին գործերի ժողկոմ Ասքանազ Մռավյանը և ներքին գործերի ժողկոմ Պողոս Մակինցյանը: Թուրքիայի կողմից այն ստորագրել են Քյազիմ Կարաբեքիրը, Վելի բեյը, Մուխթար բեյը, Ադրբեջանում Թուրքիայի լիազոր ներկայացուցիչ Մեմդուհ Շևքեթը, ՌԽՖՍՀ կառավարության կողմից՝ Յակով Գանեցկին:

Մասնավորապես Հայաստանի վերաբերյալ Կարսի պայմանագրի հոդվածները հետևյալն էին.

Հոդված 1. Կողմերը համարում էին վերացված և ուժ չունեցող այն բոլոր պայմանագրերը, որոնք կնքվել էին Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների միջև մինչև՝ ներկա պայմանները, ինչպես նաև 3-րդ պետությունների միջև կնքված այն բոլոր պայմանագրերը, որոնք վերաբերում էին Անդրկովկասյան հանրապետություններին: Պայմանագրի մեջ բացառության կարգով նշվում էր նաև, որ այդ հոդվածները կիրառելի չեն միայն 1921թ. մարտի 16-ի՝ Մոսկվայում կնքված ռուս – թուրքական պայմանագրի նկատմամբ:

Հոդված 2. ՀՀ և առհասարակ Անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունները համաձայնում էին չճանաչել Թուրքիային վերաբերող որևէ միջազգային ակտ, որը չի ճանաչվել Թուրքիայի ազգային կառավարության կողմից: Թուրքիա ասելով հասկացվում էր այն ողջ տարածքը, որը հռչակված էր Ազգային ուխտի կողմից: Իր հերթին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը պարտավորվում էր չճանաչել որևէ միջազգային ակտ, որը չի ճանաչվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունների կողմից:

Հոդված 5. Նշվում էր, որ Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Ադրբեջանի կառավարությունները համաձայնում են, որ Նախիջևանի շրջանն այսուհետև կազմելու է ինքնավար տարածք՝ Ադրբեջանի հովանավորության ներքո: Սա շատ ծանր էր Հայաստանի համար, բայց չմոռանանք ասել, որ Խորհրդային Հայաստանն այլ ելք չուներ, քան՝ ստորագրելու Կարսի պայմանագիրը:

Մոսկվայի և Կարսի պայմանագիրերն անօրինական են ու անվավեր կնքման պահից, քանի որ պայմանագրերը կնքող կողմերից և ոչ մեկը չի հանդիսացել միջազգային իրավունքի սուբյեկտ: Հայկական ՍՍՀ-ի իրավական կարգավիճակի և Կարսի պայմանագրի օրինականության և իրավականության (legitimacy and legality) հարցերը սերտորեն շաղկապված են: Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական ուղեցույց-ձեռնարկի՝ «միջազգային պայմանագրերը համաձայնություններ են միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխության են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները»: Այսինքն, պայմանագրի օրինականության և իրավականության համար անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգային իրավունքի սուբյեկտ, այն է՝ լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ:

Խիստ խնդրահարույց է նաև Կարսի պայմանագրի օրինապես վավերացված լինելու հարցը: Ըստ պայմանագրի 20-րդ հոդվածի՝ պայմանագիրը ենթակա էր վավերացման: Սակայն տպագիր աղբյուրներում չի գտնվել հիշատակում ՀՍՍՀ որևէ կառույցի կողմից Կարսի պայմանագրին պաշտոնական անդրադարձած, առավել ևս՝ վավերացրած լինելու մասին: Կարսի պայմանագրի վերաբերյալ սովետական աղբյուրները նշում են միմիայն վավերագրերի փոխանակման մասին (Երևան, 11.09.1922թ.), սակայն չեն նշում Հայաստանի, Վրաստանի կամ Ադրբեջանի կողմից պայմանագրի վավերացման մասին:

Օտար աղբյուրները նշում են, որ Կարսի պայմանագիրը վավերացվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից (16.03.1922թ., օրենք #207) և, ի դեմս Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի՝ ՌՍՖՍՀ-ի կողմից: Եթե սա իրողություն է, ապա, ըստ այդմ, Կարսի պայմանագիրն անօրինական է ու անվավեր՝ նաև վավերացման գործընթացի կոպիտ խախտման պատճառով: Ըստ միջազգային իրավունքի հստակ է. յուրաքանչյուր երկիր կարող է որևէ պայմանագիր վավերացնել միմիայն իր անունից և իր համար ու չի կարող դա անել ուրիշի փոխարեն:

Այսպիսով, Կարսի պայմանագիրը ստորագրելու գործընթացը ոտնահարել է մի շարք jus cogens-ներ: Ըստ այդմ, եթե սահմանի հստակեցման և հաստատման գործընթացը խախտել է միջազգային իրավունքի որևէ անբեկանելի սկզբունք՝ jus cogens, ապա տվյալ սահմանն անօրինական է և անվավեր (illegal and void), քանի որ անօրինական և անվավեր է այն ամրագրող պայմանագիրը: Այս սկզբունքն ամրագրված է Վիեննայի Պայմանագրերի մասին օրենքի կոնվենցիայի 53-րդ հոդվածում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Hovannisian, Richard.** The Armenians: Past and Present in the Making of National Identity. New York: Routledge, 2005.- P. 110, ISBN 0-203-00493.
2. Документы внешней политики СССР. - Moscow, 1959. Vol. III. - P. 597-604.
3. **Барсегов Ю.Г.** Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. - М., 2005, Т. 2, часть 2. - С. 515-518.
4. **Richard G. Hovannisian** The Armenian People from Ancient to Modern Times: Foreign dominion to statehood: the fifteenth century to the twentieth century. Palgrave Macmillan, 2004. - 417p.
5. **Պապյան Ա.** Հայրենատիրություն, Հայոց պետականության իրավական հիմունքները և հարակից հարցեր: - Երևան, 2012.- էջ 263-268:

А.С. КАЗАРЯН

АЛЕКСАНДРОПОЛЬСКИЙ, МОСКОВСКИЙ И КАРССКИЙ ДОГОВОРЫ ПРОТИВ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Изучаются Александропольский, Московский и Карсский договоры, сыгравшие важную роль в жизни армянского народа. Показаны роль кемалистов, а также отрицательное воздействие этих договоров.

Ключевые слова: Александропольский договор, Московский договор, Карсский договор, международное право.

A.S. GHAZARYAN

AGREEMENTS OF ALEXANDRAPOL, MOSCOW AND KARS AGAINST INTERNATIONAL LAW

Alexandrapol, Moscow and Kars Treaties playing an important role in the life of Armenians are introduced. The role of Kemalists, as well as the negative impact of these treaties are shown.

Keywords: treaty of Alexandropol, treaty of Moscow, treaty of Kars, International Law.